

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՏԱՐՈՆԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ
ԱՐՄԵՆ ԽԼՂԱԹՅԱՆԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

2020 թվականի փետրվարի 3-ին ժամը 14:00-ին Արմավիրի մարզի Տարոնիկ համայնքի ղեկավարի տարեկան հաշվետվությանը ներկա են մարզպետարանի աշխատակազմի Առողջապահության և Սոցիալական ապահովության վարչության պետ Հովհաննես Հարությունյանը, համայնքապետարանի աշխատակիցներ և համայնքի բնակիչներ:

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Տարոնիկ համայնքի ղեկավարը ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին>> և << Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքներով, համայնքի ղեկավարի աշխատակազմի, ավագանու և համայնքապետարանի ենթակայության տակ գտնվող աշխատակիցների միջոցով իրականացրել է իրեն վերապահված իրավասությունների շրջանակներում իր լիազորությունները:

1. Քաղաքացիների իրավունքների պաշտպանության բնագավառում

2019 թվականի ընթացքում համայնքապետարան է դիմել 502 բնակիչ: Դիմումներում բարձրացվել են սոցիալական, հողային, շինարարության, ֆինանսական, անձնական և այլ բնույթի հարցեր, որոնք սահմանված կարգով քննարկվել են և տրվել լուծումներ: Ընթացիք ժամանակահատվածում համայնքապետարանում ստացվել է 324 գրություն, հղվել է 357 պաշտոնական գրություն, համայնքի բնակիչներին տրվել է 447 տեղեկանք:

Համայնքապետարանը համայնքի բնակիչների շահերը պաշտպանելու նպատակով իր միջնորդությամբ հանդես է եկել անձնագրային բաժնում, նոտարական գրասենյակում, կադաստրի տարածքային ստորաբաժանումներում, դատարանում և այլ կառույցներում:

Համայնքում կայացել է ավագանու 3 նիստ, որտեղ քննարկվել են համայնքի խնդիրներին վերաբերվող տարբեր բնույթի հարցեր և կայացվել է ավագանու 33 որոշումներ, որոնք ներկայացվել են մարզպետարան:

Համայնքի ղեկավարի կողմից կայացվել է տարբեր բնույթի 66 որոշում և արձակվել է 38 կարգադրություն, որոնք նույնպես ներկայացվել են մարզպետարան:

Համայնքապետարանը ժամանակին կազմել և ներկայացրել է բոլոր

հաշվետվությունները ըստ պատկանելության:

2. Ֆինանսների բնագավառում

Տնօրինել է համայնքի 2019 թվականի բյուջեի մուտքերը և նպատակային օգտագործումը:

Եկամուտներ

1. Հողի հարկ	6220.7 հզ. դրամ
2. Գույքահարկ	8885.1 հզ. դրամ
3. Հողի վարձակալության գումար	6.0 հզ. դրամ
4. Դոտացիա	37853.9 հզ. դրամ
5. Աղբահանության վճար	624.8 հզ. դրամ
6. Տեղական տուրքեր	255.0 հզ. դրամ

Ծախսային մաս

1. Տեղական ինքնակառավարում	29769.3 հզ. դրամ
2. Գրադարաններ	6700.0 հզ. դրամ
3. Երիտասարդական ծրագրեր	3343.0 հզ. դրամ
4. Ընդհանուր բնույթի ծառայություն	4559.2 հզ. դրամ
5. Աղբահանություն	2292.8 հզ. դրամ
6. Մշակույթի տների հիմնանորոգում	995.0 հզ. դրամ
7. Գյուղատնտեսություն	259.0 հզ. դրամ
8. Ոռոգում	1000.0 հզ. դրամ
9. Սոց օգնություն	2540.0 հզ. դրամ
10. Ջրամատակարարում	1265.0 հզ. դրամ

Համայնքապետարանը աշխատակազմի աշխատակիցների աշխատավարձերի և եկամտային հարկի գծով հաշվետու ժամանակաշրջանում պարտքեր չունի:

3. Պաշտպանության բնագավառում

Համայնքապետարանը տարածքային զինկոմիսարիատից ստացած ծանուցագրերը ժամանակին հասցնում է հասցեատիրոջը և հետևում է, որ ժամանակին ներկայանան զինկոմիսարիատ:

4. Քաղաքաշինության և հողօգտագործման բնագավառում

Ամենօրյա ուշադրության կենտրոնում է գտնվում և օրենքով սահմանված կարգով վերահսկողություն է իրականացվում հողերի նպատակային օգտագործման վրա:

Անընդհատ աշխատանք է տարվում հողօգտագործողների հետ հողի հարկի, գույքահարկի գծով հարկերի հավաքագրման ուղղությամբ: Համայնքում մասնագետների մասնակցությամբ տրվել է անվճար խորհրդատվություն բույսերի պաշտպանության հարցում:

Կատարվել է հողամասերի չափագրման և սահմանների ճշգրտման աշխատանքները:

5. Կոմունալ տնտեսության և բարեկարգման բնագավառում

Կատարվել է համայնքի ներքին ջրահեռացման առուների վերանորոգում: Համայնքապետարանը մշտապես աջակցում է էլեկտրամատակարարման, ոռոգման ջրի մատակարարման, գազամատակարարման ծառայությունները իրականացնող աշխատակիցներին:

Հիմնանորոգվել է մշակույթի տան դիմային հատվածի տանիքը:

Համայնքը ունի գրադարան 5000 կտոր գրականություն, որից օգտվում են համայնքի բնակիչները և դպրոցի աշակերտները:

6. Մոցիալական ծառայության բնագավառում

Ուշադրության կենտրոնում են գտնվում նյութապես անապահով, ֆինանսական կարիք ունեցող ընտանիքները, որոնց տրվում է ֆինանսական օգնություն: 2019 թվականի ընթացքում համայնքապետարանը կարիքավոր ընտանիքներին տրամադրել է ֆինանսական օգնություն ընդհանուր գումարով՝ 2540.0 հզ դրամ:

Համայնքում գործում է «Խնամակալության և Հոգաբարձության հանձնաժողով», որի հիմնական խնդիրն է անօթևան երեխաների հայտնաբերումն ու դաստիարակումը և դատական

վեճերի պարագայում երեխայի բնակության վայրը որոշելու մասով եզրակացության տրամադրումը:

Համայնքապետարանը մշտապես աջակցում է Բուժաամբուլատորիային համայնքի բնակչության բուժ. սպասարկումը պատշաճ կազմակերպելու գործում:

7. Գյուղատնտեսության բնագավառում

Տարածքային վիճակագրական վարչություն է ներկայացվել ցանքաշրջանառության, պտղի և բանջարեղենից ստացված բերքի, սեռատարիքային և անասունների վերաբերյալ հաշվետվություններ: Համայնքում կազմակերպվում է անասունների և թռչունների համաճարակային պատվաստումներ:

Հ Ի Մ Ն Ա Խ Ն Դ Ի Ր Ն Ե Ր

Տարոնիկ գյուղի հիմնախնդիրներն են՝

1. Խմելու ջրի քլորակայանի կառուցման և ջրագծի կեսի կառուցման հարցը:
2. Մանկապարտեզի շենքի վերանորոգման հարցը:
3. Կուլտուրայի տան վերակառուցման հարցը:
4. Ներհամայնքային ճանապարհների և փողոցներ բարեկարգման հարցը:
5. Բուժամբուլատորիայի վերանորոգման հարցը:

ՏԱՐՈՆԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Ա. ԽԼՂԱԹՅԱՆ

03 փետրվարի 2020 թվական

Տարոնիկ համայնք